թագաւորն Լեհաց Ստեփանոս Պատորին՝ յամի 1579 հաստատէ. որովհետեւ Հայք յայնժամ չէին հնազանդեալք Ս. Աթոռոյն Հռոմայ։

1562. ՌԺԱ. ԶԳրիգոր արքեպիսկոպոսն Լէոպոլսի Հայոց՝ Սիկիզմունտ Աւգուզդ թագաւորն Լեհաց, յայսմ ամի յուլիսի 25, հաստատէ յեպիսկոպոսութիւն, ընդ բոլոր թագաւորութիւնն Լեհաց, յատկապէս յիշելով զքաղաքսն, զԼէոպոլիս, զԿամէնից, զՊիլով, և զայլն. զոր կերպն հաստատութեան և այլ յաջորդք սորին ընկալան ի թագաւորացն՝ մինչեւ ցկիրակոզայոս Թորոսովիչն։ Սա զդատաւորսն Լէոպոլսեցիս՝ որք զքահանայքս ընդդէմ կամաց նորին դատէին և ի հոգեւոր իրս հակառակին նմա, կոչեաց ի դատ՝ առ նոյն Լեհաց արքայն, որ յամի 1569 վճռեաց, զի դատաւորքն ի հոգեւոր իրաւունսն բնաւ մի՛ խառնեսցին, և զայլ բազում ինչ՝ զոր թողումք։ — Կոնտակ։

1568. ՌԺԷ. Գրիգոր արքեպիսկոպոսն Լէոպոլսի թողեալ զաթոռն վասն հերձուածողութեան և հակառակութեան ժողովրդոցն՝ երթայ Յերուսաղէմ, և անտի ի Հռոմ. որպէս ցուցանէ Երուսաղեմայ գոմիսարն ճանապարհագիրն, յամի 1568. որպէս գրէ Եզու եւ Connet.

1577. ՌԻԶ. Թադէոս կաթողիկոսն Էջմիածնի՝ փախստական ի պարսուց՝ գայ ի Կամէնից, ուր յայսմ ամի հաստատէ աւագերէց զՏէր Յովհաննէսն, և ի միւսում ամի երեսփոխան՝ զպարոն Միխնոյն. տալով սմա իշխանութիւն ի վերայ քահանայից, եւս և հոգեւոր իրաց. որ է ընդդէմ սուրբ կանոնաց եկեղեցւոյ։ — Կոնտակ։

1579. ՌԻԸ. Պարսամ արքեպիսկոպոսն Լէոպոլսի Հայոց՝ էր Տրապիզոնցի, Աստուածատրոյ որդի, որ յայսմ ամի յունիսի 12, ի թագաւորէն Լեհաց Ստեփաննոսէ Պատորէն հաստատեցաւ յառաջնորդութիւն Հայոց, — զի յառաջ ընտրեցաւ ի Լէոպոլսեցւոց, — և հոկտ. 25, ընկալեալ և ի Կամէնցւոց, արար զսովորական դաշն ընդ նոսա։ — Կոնտ. Կամեն. ի Կոնտակ։

1582. ՌԼԱ. Պարսամ եպիսկոպոսն կենդանի էր յայսմ ամի։

1598. Յովհաննէս Բ, Սեչովու և Պուղտանայ եպիսկոպոսն՝ ի պարապել աթոռոյն Լէոպոլսի՝ նստի ընդ սուղ ժամանակ արքեպիսկոպոս նորին. որպէս ցուցանեն հոգեւոր ատենագիրքն Կամէնիցու՝ յայսմ ամի, և թուղթք Մելքիսեդեկ կաթողիկոսի։ — Կոնտակ։ — Սմին յետոյ յաջորդեաց Կարապետն։

1606. ՌԾԵ. Տէր Կարապետ արքեպիսկոպոս Լէոպոլսի Հայոց. — ոչ կարացաք գիտել թէ ուստի էր, — ուլիսի 2, ի Կամէնցացւոց ընտրի առաջնորդ, որպէս ի Լէոպոլսեցւոցն էր ընտրեալ. բայց զհաստատումն նորա թագաւորական՝ ոչ գտաք։ Զկնի մահուան սորա նստի արքեպիսկոպոս Տէր Մեսրոպ եպիսկոպոսն. զի գտանի ի Կամենից օրինակ ինչ թագաւորական հաստա-